



Եւ Եվրախնտեգրումն անհրաժեշտություն է Վրաստանի համար, թեպետ մյուս կողմից՝ Եվրամիության համար արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում Վրաստանի աշխարհագրական դիրքը: Եվրախնտեգրման ուղին հեռանկարային է, սակայն մենք այն չպետք է անցնենք՝ ինչպես իրականացրինք Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամագրության ժամանակ, երբ մենք առանց հաշվի առնելու Վրաստանի առաջնահերթությունները, նույնիսկ այն ուղղությունները, որոնք մեզ վերապահում էր այդ կազմակերպությունը, ստորագրեցինք անդամագրության պայմանագիրը:

- ՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ

- Այն ամենը, ինչի մասին վերելում խոսեցի, ելնում է հենց այդ փորձի հաշվառումից: Մեծ է այն երկրների թիվը, որոնք բառացիորեն փոշմանել են, որ Եվրամիության անդամագրության ժամանակ չեն պնդել իրենց պայմանների կատարման հարցում: Վերջերս գտնվում էի Լիտվայում, որտեղ շատ հանդիպումներ ունեցա: Ժամանակին այդ ծաղկող երկրում ներկայումս բազում հիմնախնդիրներ են առաջացել: Բնակչության գրեթե 40 տոկոսն աշխատանքի որոնումներով հեռացել է երկրից: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական նրբություններին, ապա պարտադիր չէ, որ ասոցիացման բոլոր պայմաններն առաջին իսկ տարվա ընթացքում կատարվեն: Օրինակ, Լեհաստանը նոր պայմաններում իր էկոնոմիկայի նախապատրաստման համար պայմանագրով իրեն վերապահեց 3-5 տարի ժամանակահատված:

Թեպետ կա նաեւ այլ ծայրահեղություններ: Օրինակ, Ադրբեջանը չընդունեց Եվրամիության ներկայացված պայմանները եւ հանդես եկավ արմատական հայտարարությամբ: Բնականաբար, այդ ուղին մեզ համար ձեռնտու չէ, թեպետ մյուս կողմից մենք պարտադիր կարգով պետք է ներկայացնենք մեր պայմանները: Համոզված եմ, որ այնպիսի հզոր միավորում, ինչպիսին Եվրամիությունն է, Վրաստանի հետ հարաբերությունների շատ հարցերում կարող է դիմել զիջումների, եւ մեր նկատառումները հաշվի կառնվեն:

ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ